[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
1	Հունիս	2018 թ.		Ա	5211221652
[4] Մատակարարման ամսաթիվ					
1	Հունիս	2018 թ.			

Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ			N 11500166513800						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834						
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծանոթագրություն)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	90757016 դատահոգեբանական փուձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անուն, ազգանուն)

պաշտոնը ստորագրությունը (անուն, ազգանուն)

01/06/2018 14:16:36

ՈՐՈՇՈՒՄ
հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

25.12.2017թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ռ.Գ.Մկրտչյանս, քննարկելով վարույթիս թիվ 90757016 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2016 թվականի հուլիսի 3-ին՝ ժամը 10^{20}-ի սահմաններում, ՀՀ ՊՆ 21127 զորամասի պաշտպանական շրջանում գտնվող թիվ 36՝ <<Լույս>> կոչվող, մարտական հենակետի թիվ 5-րդ դիտակետում հայտնաբերվել է նույն հենակետում ժամը 08^{20}-ից մինչև 10^{20}-ը որպես դիտորդ ծառայության նշանակված, նույն զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի նռնականետային դասակի նռնականետային ջոկի նշանառու, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Արսեն Արթուրի Մխիթարյանի դին՝ ծնոտի շրջանում մահացու հրազենային վնասվածքով:

Նույն օրը դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ և կատարվել նախաքննություն:

2016 թվականի հուլիսի 13-ին որոշում է կայացվել Արսեն Մխիթարյանի հորը՝ Արթուր Մխիթարյանին, տուժողի իրավահաջորդ ճանաչելու մասին, իսկ 27.07.2016թ-ին, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Նորիկ Նորիկյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ:

2016 թվականի հոկտեմբերի 18-ին քրեական գործի հետագա նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ ՀԿԳ քննության վարչությանը:

Նախաքննությամբ պարզվել է, որ շարքային Արսեն Մխիթարյանը, նույն ստորաբաժանման 9 զինծառայողների թվում, 24.06.2016 թվականի մինչև 08.07.2016 թվականը, վերը նշված հենակետում մարտական հերթապահության է նշանակվել: Հենակետի ավագը հանդիսացել է լեյտենանտ Նարեկ Բաղդասարյանը, իսկ հենակետի ավագի օգնականը եղել է, շարքային Արամ Ղազարյանը:

Դեպքի օրը՝ 03.07.2016 թվականին, ժամը 08^{20}-ի սահմաններում, Արսեն Մխիթարյանը թիվ 5-րդ դիտակետում որպես դիտորդ ծառայություն կատարելու նպատակով վերցրել է իր զինվորական հանդերձանքները, այդ թվում՝ իրեն ամրակցված <<ԱԿՄ>> տեսակի <<Я 03965>> համարի ինքնաձիգը, ու առանց զենքի լիցքաթափման գործողություններ կատարելու, առանց ուղեկցության գնացել թիվ 5-րդ դիտակետ և փոխարինել դիտորդ շարքային Նարեկ Կարապետյանին: Մինչ ժամը 10^{20}-ը Արսեն Մխիթարյանը դիտակետը չի լքել, իսկ անձնակազմը դիտակետ չի բարձրացել: Ժամը 10^{20}-ի սահմաններում, Արսեն Մխիթարյանին փոխարինման գնացող դիտորդ Նարեկ Մանուկյանը բարձրանալով դիտակետ, այնտեղ տեսել է Ա.Մխիթարյանին արյունոտված ընկած վիճակում և այդ մասին անմիջապես հայտնել է հենակետի ավագին, իսկ վերջինս էլ դեպքի մասին տեղեկացրել է զորամասի հրամանատարությանը:

Նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն, 03.07.2016 թվականին, ժամը 08^{20}-ից մինչև ժամը 10^{20}-ը ընկած ժամանակահատվածում, նշված հենակետի զինծառայողներից, շարքային Արամ Հովհաննիսյանը որպես դիտորդ ծառայություն է կատարել թիվ 9-րդ դիտակետում, իսկ գետնատանակի մոտ գտնվող դիտակետի արթուն հերթափոխի դիտորդ է հանդիսացել կրտսեր սերժանտ Ռաֆայել

Ճաղարյանը, ովքեր դիտակետերից չեն բացակայել: Հենակետի մյուս զինծառայողները նշված ժամանակահատվածում գտնվել են գետնատնակում, հենակետի ճաշարանում, հենակետի բացօթյա տաղավարում և թիվ 5-րդ կամ այլ դիտակետերի ուղղությամբ չեն գնացել, նշված վայրերից չեն բացակայել ու այդ ընթացքում կրակոցի, վիճաբանության, գոռգոռոցների կամ այլ տարօրինակ ձայներ չեն լսել, ինչպես նաև հակառակորդի կողմից շարժ կամ այլ արտառոց իրադարձություններ չեն եղել:

Նախաքննությամբ պարզվել է նաև, որ 03.07.2016 թվականին՝ մինչև դեպքը, հենակետում բացի հենակետի զինծառայողներից այլ անձինք չեն եղել, հենակետի զինծառայողների միջև այդ և նախորդող օրերին որևէ վիճաբանություն, խոսակցություն կամ այլ նմանատիպ միջադեպեր տեղի չի ունեցել, զինծառայողները կատարել են իրենց մարտական ծառայությունը, իսկ ազատ ժամերին զբաղվել առօրյա և ծառայողական հարցերով:

Դեպքի վայրի զննության արձանագրության համաձայն, Արսեն Մխիթարյանի դիակը հայտնաբերվել է նշված հենակետի թիվ 5-րդ դիտակետում, աջ կողմի վրա ընկած վիճակում՝ դիակի նստատեղի աջ կողմի մասը դիտակետի մուտքի դիմացի պատի մոտ գտնվող 36x20x17սմ չափերի ուղղանկյունաձև քարի ձախ անկյան եզրին հենված: Դիակի մոտ հայտնաբերվել է վերջինիս ամրակցված <<ԱԿՄ>> տեսակի <<Ռ 03965>> համարի ինքնաձիգը՝ արյան հետքերով: Ինքնաձիգի ապահովիչը գտնվել է բաց վիճակում՝ կրակահերթ դիրքի վրա, իսկ փամփուշտատուփը ինքնաձիգի վրա չի եղել, գտնվել է Ա.Մխիթարյանի գոտկատեղի հատվածում գտնվող սաղավարտի մեջ: Ինքնաձիգի փողը գտնվել է դիակի ոտքերի ծնկային հատվածի մեջտեղում՝ ինքնաձիգի խզակոթը դեպի դիտակետի մուտքը, իսկ նշված քարի ստորին հատվածից 30 սմ դեպի ձախ գետնի վրա ընկած է եղել փամփուշտի կրակված պարկուճ, որի վրա նույնպես արյան հետքեր են եղել:

Դեպքի վայրի զննության ժամանակ դիտակետի պատերի որոշ հատվածներին արձանագրվել են ուղեղանյութի զանգվածներ, այդ թվում՝ դրանք եղել են դիտակետի ծածկի 10-րդ գերանի հատվածներում, այն նույն գերանի, որի վրա զննության ժամանակ հայտնաբերվել է հրազենային վնասվածքի նմանվող քերծվածք: Նույնանման վնասվածք է հայտնաբերվել նաև դիտակետի ծածկի 11-րդ գերանի վրա, որը դեպքի վայրի զննության ժամանակ հատուկ գործիքների միջոցով փորվել է, սակայն փամփուշտի գնդակ չի հայտնաբերվել: Վնասված մյուս գերանի հատվածը դեպքի վայրի լրացուցիչ զննության ժամանակ համապատասխան չափով կտրվել է և ուղարկվել դատաձգաբանական փորձաքննության՝ գերանի վրա առկա վնասվածքի բնույթը պարզելու համար, որի եզրակացության համաձայն. <<Փորձաքննության ներկայացված գերանի կտրված հատվածի վրա առկա վերը նկարագրված վնասվածքը հանդիսանում է հրազենային գնդակային հարվածական-շոշափող վնասվածք, պատճառվել է պղինձ պարունակող՝ ամենայն հավանականությամբ արգելաշերտի միջոցով անցած գնդակով կամ լիցքի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից կատարված մեկ կրակոցի արդյունքում...>>:

Դեպքի վայրի զննության ընթացքում Արսեն Մխիթարյանի դիակը ուղղելու ժամանակ, վերջինիս որովայնի ստորին հատվածից գետնի վրա են ընկել նրա զինվորական սաղավարտը, որի մեջ եղել են՝ ինքնաձիգի 1 հատ փամփուշտատուփ՝ 29 հատ 7,62մմ տրամաչափի փամփուշտներով և 1 հատ <<Սամսունգ>> մոդելի բջջային հեռախոս: Հայտնաբերված բոլոր առարկաների վրա եղել են արյան հետքեր:

Դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն. <<Ա.Մխիթարյանի մահը հետևանք է գլխուղեղի դիֆուզ տրավմատիկ ախտահարմանը, որն էլ պայմանավորված է եղել գլխի հրազենային, գնդակային միջանցիկ վիրավորումներով և նրա մահը վրա է հասել հրազենային վնասվածքը ստանալուց ոչ միջապես հետո:

Դիակի վրա հայտնաբերվել են՝ ախտից ստորկզակային շրջանի մաշկածածկույթների հյուսվածքային դեֆեկտ՝ հրազենային մուտքի, ճակատա-կողմնային շրջանի սալջարդ վերք՝

ելքի անցք, ստորկզակային, լեզվի, գլխուղեղի և ուղեղիկի փափուկ թաղանթների, կարծրենու գլխուղեղի փորոքային համակարգի և գլխուղեղի, ձախից քունքամկանի, գլխի մազածածկ հատվածի ներսային մակերեսի, երկու կողմից վերին և ստորին կոպերի արյունազեղումներ, ստորկզակային շրջանի մկանների, ստորկզակային զարկերակի, լեզվի, գլխուղեղի կարծր և փափուկ թաղանթների, գլխուղեղի վնասվածքներ, գլխուղեղի մասնակի ջնջխում, գանգի հիմի և թաղի ոսկրերի, ստորին ծնոտի անկյան շրջանի բազմաբեկորանի և ձախից վերին և ստորին ծնոտների կոտրվածքներ, կարծր քիմքի, գանգի հիմի և թաղի ոսկրային դեֆեկտներ, ձախից թշա-կզակային շրջանների պատռվածքներ:

Վերը նշված վնասվածքները պատճառվել են կենդանության օրոք, միաժամանակ, գնդակով լիցքավորված, որի կազմի մեջ եղել է պղինձ, տվյալ զենքին բնորոշ կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններում կատարված հրազենից արձակված մոտ կրակոցով, որոնք կենդանի անձանց մոտ ունեն կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնասի հատկանիշներ և անմիջական պատճառական կապի մեջ են գտնվում նրա մահվան հետ: Հրազենային վնասվածքը միջանցիկ է և հարզենային վնասվածքը ունեցել է՝ ներքևից-վերև և թեթևակի ձախից-աջ ուղղություն, իր ընթացքով վնասելով ձախից ստորկզակային շրջանի մաշկածածկույթը և բերանի ստոծանին՝ մուտքի անցք, լեզուն միջանցիկ, ձախից՝ ստորին ծնոտը, կարծր քիմքը և վերին ծնոտը, առաջնային գանգափոսի ոսկրերը, կարծրենին՝ հիմի շրջանում, գլխուղեղի փափուկ թաղանթները հիմային և թաղային մակերեսներին, գլխուղեղի զույգ կիսագնդերը՝ ճակատային և կողմնային բլթերի պրոյեկցիաներով՝ ջնջխման տեսքով, կարծրենին թաղային մակերեսին, գանգաթաղի ոսկրերը ճակատակողմնային շրջաններում՝ դեֆեկտի տեսքով և ճակատային շրջանի մաշկածածկույթները՝ ելքի անցք:

Ա.Մխիթարյանը հրազենային վնասվածքը ստանալու պահին կարող էր գտնվել ցանկացած դիրքում, որը արգելք չէր հանդիսանա վնասվածքի պատճառմանը և կզակային շրջանով ուղղված լինելով դեպի հրազենի փողաբերանի լայնական կտրվածքը: Ելնելով Ա.Մխիթարյանի ստացած հրազենային վնասվածքի տեղակայումից և հաշվի առնելով սեփական ձեռքի հասանելիությունը, չի բացառվում, որ այն պատճառվեր ինչպես իր, այնպես էլ մեկ ուրիշի կողմից>>:

Նույն դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ հաստատվել է, որ բացի վերը նշված հրազենային վնասվածքներից, այլ վնասվածքներ Արսեն Մխիթարյանի մոտ չեն հայտնաբերվել:

Նախաքննության համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ պարզելու նպատակով, դեպքի օրը՝ 03.07.2016 թվականին նախաքննական մարմնի որոշումների հիման վրա, նշված հենակետի բոլոր զինծառայողների, այդ թվում՝ Արսեն Մխիթարյանի, մարմնի տարբեր մասերից խծուծների միջոցով վերցվել են հետազոտման նմուշներ և ուղարկվել դատաձգաբանական փորձաքննության: Այդ փորձաքննությունների /առանձին-առանձին/ եզրակացությունների համաձայն, հենակետի բոլոր զինծառայողների մոտ, բացառությամբ հանգուցյալ Արսեն Մխիթարյանի, նրանց մարմնի տարբեր մասերից վերցված խծուծների վրա կրակոցի արգասիքների մեջ մտնող վառոդային մրի հետքեր, վառոդի կիսայրված մասնիկներ, ինչպես նաև քսայուղերին բնորոշ հետքեր չեն հայտնաբերվել: Սակայն նրանց մարմնի տարբեր հատվածներում հայտնաբերվել են պղնձի մետաղացման հետքեր, որը մտնում է կրակոցի արգասիքների մեջ, ինչպես նաև, նրանց բոլորի մարմնի տարբեր հատվածներից վերցված 7 խծուծների վրա առկա են եղել անտիմոն մետաղի քանակություն, որը չի գերազանցել ընդունված շեմային մակարդակը:

Արսեն Մխիթարյանի դիակի արտաքին զննման ժամանակ նրա դիակի տարբեր մասերից վերցված քսուքներով նշանակված դատաձգաբանական փորձաքննության եզրակացության համաձայն. <<Ներկայացված՝ Արսեն Մխիթարյանի մարմնի տարբեր մասերից վերցված խծուծների վրա առկա են կրակոցի արգասիքներ, որոնք NN 6, 7 և 8 խծուծների վրա արտահայտված են պղնձի մետաղացման հետքերի տեսքով և ընդունված շեմային մակարդակը

գերազանցող անտիմոն մետաղի քանակությամբ /քանակական պատկերը բերված է աղյուսակ 3-ում/ ինչպես նաև N 8 խծուծի վրա վառոդային մրի և վառոդի կիսաայրված մասնիկների առկայությամբ>>:

ԱրսենՄխիթարյանի դիակի արտաքին զննման ժամանակ նրա հագին եղած զինվորական քառագույն վերնազգեստը, զինվորական քառագույն տաբատը, զինվորական շականակագույն շապիկը, զինվորական կիսաճտքավոր կոշիկները և գուլպաները, սաղավարտը, զրահաբաճկոնը՝ երեք պահեստատուփերով և փամփուշտներով ուղարկվել են դատաձգաբանական փորձաքննություն և ստացված փորձաքննության եզրակացության համաձայն, դրանց վրա հրազենային բնույթի վնասվածքներ չեն հայտնաբերվել:

Ներկայացված զրահաբաճկոնի, զինվորական բաճկոնի և զինվորական անդրավարտիքի հետազոտված հատվածների վրա հայտնաբերվել են կրակոցի արգասիքներ, որոնք արտահայտված են եղել անտիմոնի և պղնձի մետաղացման հետքերի տեսքով, իսկ սաղավարտի հետազոտված հատվածների վրա առկա է եղել պղնձի մետաղացման հետքեր, որը մտնում է նաև կրակոցի արգասիքների մեջ:

Վերը նշված զինծառայողները իրենց մարմնի տարբեր հատվածներում հայտնաբերված կրակոցի արգասիքների կապակցությամբ իրենց ցուցմունքներում հայտնել են, որ դրանք առաջացել են իրենց ամրակցված զենքերը կրակային դասընթացների ժամանակ կրակելու և այդ զենքերը պարբերաբար մաքրելու, ինչպես նաև կրակված զենքերի հետ շփվելու արդյունքում: Վերջիններս հայտնել են նաև, որ դեպքի օրը և նախորդող օրերին, մարտական հենակետում որևէ մեկը զենքից չի կրակել և դեպքի կրակոցի ձայնը չեն լսել:

Նշված հենակետի բոլոր զինծառայողների մարմնի վրա հանցագործության հետքեր կամ հատուկ նշաններ հայտնաբերելու նպատակով, դեպքի օրը՝ 03.07.2016 թվականին, նախաքննական մարմնի որոշումների հիման վրա կատարվել են քննումներ, որոնց արդյունքում նրանց մարմնի վրա մարմնական վնասվածքներ, քերծվածքներ, հանցագործության կատարման մասին վկայող հետքեր կամ նշաններ չեն հայտնաբերվել:

Բացի այդ, դեպքի օրը զննվել են նշված հենակետի բոլոր զինծառայողներին ամրակցված զենք-զինամթերքը և նրանց ամրակցված զենքերի փողաբերանին ու գազամղիչի շրջանում մրի նկատելի հետքեր չեն հայտնաբերվել, ինչպես նաև նրանց հատկացված զինամթերքի՝ փամփուշտների /7,62մմ տրամաչափի/ պակաս չի արձանագրվել: Բոլորին հատկացված են եղել 4 հատ պահեստատուփ, յուրաքանչյուր պահեստատուփի մեջ 30 հատ փամփուշտ և միայն Արսեն Մխիթարյանի մոտ դեպքի վայրի զննության ժամանակ արձանագրվել է 1 հատ փամփուշտի պակաս՝ վերջինիս որովայնի հատվածից ընկած փամփուշտատուփի մեջ առկա են եղել 29 հատ փամփուշտներ:

Դեպքի վայրում հայտնաբերված <<ԱԿՄ>> տեսակի <<Я 03965>> համարի ինքնաձիգը, որը ամրակցված է եղել Արսեն Մխիթարյանին, 1 հատ պարկուճը և 1 հատ փամփուշտատուփը՝ լիցքավորված 29 հատ 7,62 մմ տրամաչափի փամփուշտներով, ինչպես նաև վերջինիս դիակի արտաքին զննման ժամանակ նրա դիակից վերցված ձեռքերի մատների և ափերի մաշկի գծանախշերի դրոշմահետքերը ուղարկվել են դատաձգաբանական և դատահետքաբանական /մատնադրոշմնային/ համալիր փորձաքննության և այդ փորձաքննության թիվ 1836-16 եզրակացության համաձայն, <<Հետևություններ>> մասում մասնավորապես նշվել է. <<փորձաքննության ներկայացված ինքնաձիգը հանդիսանում է 1969թ. գործարանային արտադրության <<AKM>> տեսակի <<Я 03965>> համարի 7,62մմ տրամաչափի ակոսափող ինքնաձիգ, սարքին է, պիտանի է կրակելու համար և հանդիսանում է ակոսափող հրազեն: Ինքնաձիգի ապահովիչ-փոխադրիչ դետալը գտնվում է կրակահերթով կրակելու ռեժիմի վրա, հրահանը գտնվում է հետին՝ մարտական դիրքում, իսկ փամփուշտանոցում փամփուշտ չկա>>:

Նշված փորձաքննության եզրակացությամբ նշվել են նաև. <<ներկայացված պահունակի մեջ առկա ընդհանուր թվով 29 հատ փամփուշտները հանդիսանում են գործարանային արտադրության 7,62մմ տրամաչափի մարտական փամփուշտներ, նախատեսված են <<AK>>

տեսակի ինքնաձիգերի և այլ համապատասխան տրամաչափի ակոսափող զենքերի համար, պիտանի են կրակոցների համար և հանդիսանում են ռազմամթերք: Ներկայացված պարկուճը հանդիսանում է <<АК>> տեսակի ինքնաձիգերի և այլ համապատասխան տրամաչափի ակոսափող զենքերի համար նախատեսված գործարանային արտադրության 7,62մմ տրամաչափի փամփուշտի մաս՝ կրակված պարկուճ, որը կրակվել է փորձաքննությանը ներկայացված ինքնաձիգից: Նշված ինքնաձիգի փողում հայտնաբերվել են կրակոցի արգասիքներ: Նույն ինքնաձիգի և պահունակի վրա պիտանի ձեռքի հետքեր չեն հայտնաբերվել>>:

Նշված համալիր փորձաքննության եզրակացության շրջանակներում մի շարք հանգամանքների պարզաբանման նպատակով հարցաքննված՝ դատամատնադրոշմնային, դատաձգաբանության և դատաքիմիական բնագավառի փորձագետները իրենց ցուցմունքներում մասնավորապես հայտնել են, համապատասխանաբար՝ ըստ փորձագետ Ա.Գայումյանի, փորձաքննության ներկայացված ինքնաձիգի և պահունակի վրա տեղ-տեղ արտահայտված հետքեր եղել են, որոնք չեն պարունակել մաշկային գծանախշեր, ինչի հետևանքով դրանք պիտանի չեն եղել նույնացման համար:

Փորձագետ Վ.Զաքարյանը առաջադրված հարցի կապակցությամբ հայտնել է. <<ինչպես նշվել է փորձաքննության եզրակացության հետազոտական մասում, փորձաքննության ներկայացված ինքնաձիգի հրահանը գտնվել է հետին՝ մարտական դիրքում: Ներկայացված ինքնաձիգը իր կառուցվածքով ինքնալիցքավորվող է, այսինքն՝ յուրաքանչյուր կրակոցից հետո գազամխոցով փակաղակի շրջանակը վառոդային գազերի ազդեցության հետևանքով հետ է շարժվում, որի ընթացքում կրակված պարկուճը դուրս է շպրտվում, այնուհետև՝ հետադարձ մեխանիզմի միջոցով վերադառնում է իր նախնական դիրքին, ինչի հետևանքով հրահանը ֆիքսվում է հետին՝ մարտական դիրքով և ինքնաձիգի ձգանը սեղմելով արձակվում է կրակոց: Հրահանը մարտական դիրքի կարող է հայտնվել նաև ձեռքով գազամխոցի փակաղակի շրջանակը հետ քաշելու և բաց թողնելու արդյունքում: Փորձաքննության ներկայացված ինքնաձիգի փամփուշտանոցում փամփուշտ չլինելու հանգամանքը կարող է բացատրվել երկու պատճառով՝ այն է, որ կրակոցը կատարելու պահին ինքնաձիգի վրա պահունակ չի եղել և այդ պատճառով հաջորդ փամփուշտը չի լիցքավորվել փամփուշտանոցում, իսկ հրահանը գտնվել է մարտական դիրքում և ձգանը սեղմելիս բնականաբար փամփուշտի բացակայության պատճառով կրակոց չի արձակվի, սակայն կրակոց արձակելու մեխանիզմը կգործի: Մյուս տարբերակի դեպքում՝ կրակոց կատարելու պահին պահունակը կարող է գտնվել ինքնաձիգի վրա և կրակոցից հետո վերը նշված մեխանիզմով կրակված պարկուճը դուրս է շպրտվում և նորից ինքնաձիգը լիցքավորվում է, այսինքն՝ պահունակի մեջ առկա հաջորդ փամփուշտը գնում է փամփուշտանոց: Ինքնաձիգը լիցքաթափելու համար անհրաժեշտ է պահունակը հանել ինքնաձիգի վրայից և նոր կատարել լիցքաթափում, որից հետո լիցքավորված փամփուշտը դուրս է շպրտվում, իսկ հրահանը կրկին հայտնվում է մարտական դիրքում>>:

Փորձագետ Վ.Հովհաննիսյանը իրեն առաջադրված այն հարցին, թե ինչ է նշանակում փորձաքննության եզրակացությունում նշված՝ արգելաշերտի միջով անցած գնդակով, ինչպես նաև լիցքի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից կատարված կրակոցի արդյունք հարցին պատասխանել է. <<Ագելաշերտ ասելով պետք է հասկանալ այնպիսի մարմին՝ մարդու, կենդանու, առարկաներ, իրեր և այլ, որը հանդիպելով գնդակի ճանապարհին այն խոցում և անցնում է, որից հետո նոր խոցում և վնասվածք թողնում՝ տվյալ պարագայում փորձաքննության ներկայացրած գերանի հատվածին: Արգելաշերտը անցնելուց հետո արգելաշերտի վրա կարող է մնալ կրակոցի հետևանքով առաջացած արգասիքներ՝ վառոդի մասնիկներ, զենքի քսայուղի հետքեր, անտիմոնի և պղնձի մետաղացման հետքեր: Լիցքի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածություն ասելով հասկանում ենք այն տարածությունը, որը վառոդի մասնիկները, անտիմոնի, մրի, կապարի կամ պղնձի մետաղացման մասնիկները բախվելով օդի

դիմադրությանը չեն հասնում մինչև թիրախ: Տվյալ պարագայում ըստ գիտականորեն հիմնավորված մեթոդիկայի, որի մասին նշվել է եզրակացությունում, <<ԱԿՄ>> տեսակի ինքնաձիգի համար լիցքի լրացուցիչ գործոններից դուրս տարածություն հանդիսանում է մոտ 120սմ և ավելի տարածությունը: Այդ տարածությունից հետո թիրախի վրա կարող է մնալ միայն գնդակի կառուցվածքի մեջ մտնող մետաղները: Տվյալ դեպքում ներկայացված գերանի հատվածի վրա առկա վնասվածքի վրա հայտնաբերված պղինձը հանդիսանում է գնդակի բաղադրության մեջ մտնող մետաղ և այն չի հանդիսանում կրակոցի արգասիքների կազմի մեջ մտնող արգասիքների հետևանք, քանի որ գնդակը կարող է հասնել գերանին ինչպես անցնելով արգելաշերտի միջոցով, այնպես էլ լիցքի լրացուցիչ գործոնների ազդեցության դուրս տարածությունից, և ինչպես նշվել է, երկու դեպքում էլ կրակոցի արգասիքները՝ վառոդի մասնիկները, մուրը, քսայուղի հետքեր, անտիմոնի և պղնձի մետաղացման հետքերը, չէին հասնի գերանի հատվածին>>:

Արսեն Մխիթարյանի մահացու հրազենային մարմնական վնասվածք պատճառող կրակոցի հեռավորությունը, ուղղությունը, վերը նշված գերանի կտրված հատվածի վրա առկա հրազենային գնդակային վնասվածքի և վերջինիս գլխի վրա առկա հարզենային վնասվածքների ուղղությունների համապատասխանության, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքները պարզելու նպատակով նշանակված դատաձգաբանական, դատահետքաբանական և դատաբժշկական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն. << .... Ա.Մխիթարյանի գլխի հրազենային վնասվածքը պատճառվել է պղինձ պարունակող գնդակով, ներքևից-վերև, քիչ ձախից-աջ ուղղությամբ կատարված առնվազն մեկ ընդհուպ կամ ընդհուպին մոտ կրակոցի հետևանքով: Պարզել նշված վնասվածքն առաջացնող գնդակի տրամաչափը, ինչպես նաև վնասվածքն առաջացել է կրակող զենքի մեկական, թե կրակահերթ ռեժիմներում, հնարավոր չէ, փորձագիտական բավարար չափանիշների բացակայության պատճառով:

Ելնելով դեպքի վայրում կատարված դիտասևեռման արդյունքներից կարել է եզրակացնել, որ Ա.Մխիթարյանի գլխի վրա նկարագրված հրազենային վնասվածքները և ներկայացված գերանի կտորի վրա նկարագրված հրազենային վնասվածքը կարող էին գտնվել միևնույն ուղղության վրա և առաջանալ միևնույն կրակոցի հետևանքով:

Հաշվի առնելով Ա.Մխիթարյանի մարմնի տարբեր մասերից վերցված խծուծների վրա կրակոցների արգասիքների առկայությունը, ինչպես նաև դրանց տեղակայումը կարելի է եզրակացնել, որ Ա.Մխիթարյանի գլխի վրա առկա հրազենային վնասվածքը կարող էր առաջանալ նաև իր կողմից կատարված կրակոցի հետևանքով ...>>:

2016 թվականի դեկտեմբերի 5-ին որոշում է կայացվել նշված հենակետի բոլոր զինծառայողներից առգրավված բջջային հեռախոսներում առկա անձնական տեղեկություններ պարունակող տվյալները զննելու, հետազոտելու միջնորդություն հարուցելու մասին, որը դատարանի կողմից բավարարվել է: Վերջիններիս կողմից օգտագործված բջջային հեռախոսները զննվել են, որի արդյունքում քննությանը հետաքրքրող տեղեկություններ չեն ստացվել: Իսկ Ա.Մխիթարյանի մոտ հայտնաբերված 2 հատ բջջային հեռախոսները ուղարկվել են դատահամակարգչատեխնիկական փորձաքննության պարզելու համար՝ այդ բջջային հեռախոսներով հեռահաղորդակցական կապի տեղեկատվությունը, այդ թվում՝ ջնջված, ինչպես նաև հեռախոսներում առկա ու վերականգնված լուսանկարները և տեսաձայնագրությունները:

Ստացված դատահամակարգչատեխնիկական փորձաքննության թիվ 55791606 եզրակացության համաձայն, մասնավորապես նշվել է. << փորձաքննության ներկայացված <<Samsung>> ապրանքանիշի <<GT-S5300>> և <<GT-E1202i>> տեսակների թվով երկու բջջային հեռախոսներից վերջինը արտաքին հիշողության կրիչի աջակցություն չունի, իսկ մյուսի վրա առկա է 4 գիգաբայթ հիշողության ծավալով <<microSD>> տեսակի հիշողության կրիչ:

<<GT-S5300>> տեսակի բջջային հեռախոսի հպակներին առկա են եղել շահագործողի կողմից ամրացված մետաղալարեր, որոնք ամենայն հավանականությամբ ծառայել են

մարտկոցը այլընտրանքային եղանակով լիցքավորելու համար: Նույն հեռախոսի համապատասխան տեխնիկական միջոցներով հետազոտության արդյունքում պարզվել է, որ հեռախոսում առկա <<Vivacell-MTS>> ապրանքանիշի <<SIM>> հեռախոսաքարտում առկա են միայն մուտքային կարճ հաղորդագրություններ /sms/, ելքային հեռախոսազանգեր և կոնտակտային հեռախոսահամարներ: Կատարված ելքային կարճ հաղորդագրությունների, մուտքային հեռախոսազանգերի, ինչպես նաև կատարված ելքային հեռախոսազանգերի ամսաթվի և ժամի վերաբերյալ տեղեկատվությունը հնարավոր չէ պարզել: Նույն հեռախոսի ներքին և արտաքին հիշողության կրիչների փորձագիտական պատճենը ենթարկվել է հետազոտության, որի արդյունքում պարզվել է, որ բջջային հեռախոսի օգտատիրոջ էլեկտրոնային հասցեն եղել է՝ << mkhitaryanann3@gmail.com>>:

Հեռախոսի շահագործման ընթացքում նրա միջոցով կատարված հեռահաղորդակցական կապի վերաբերյալ առկա և հնարավար ջնջված տեղեկատվություն հայտնաբերելու նպատակով կատարված հետազոտությամբ պարզվել է, որ նշված հեռախոսի ներքին և արտաքին հիշողության կրիչների ֆիզիկական պատճենից հայտնաբերված, այդ թվում՝ նաև վերականգնված տեղեկատվության թվում առկա է միայն կատարված հեռախոսազանգերի, կարճ հաղորդագրությունների, <<Google Mail>> բջջային հավելվածի միջոցով կատարված էլեկտրոնային նամակագրության, <<Web Browser>> բջջային հավելվածի միջոցով համացանցային կայքերի այցելության և <<Biuetooth>> տեխնոլոգիայի միջոցով այլ բջջային հեռախոսների հետ համակցումների վերաբերյալ տեղեկատվություն:

Պարզվել է նաև, որ նույն հեռախոսի գործավարական համակարգում սոցիալական կայքերի, մասնավորապես՝ <<Facebook /<<www. Facebook.com>>/, <<Одноклассники>> / www. ok.ru/ կայքերի համապատասխան բջջային հավելվածներ տեղակայված չեն և տեղակայված չեն եղել: Այսինքն՝ <<GT-S5300>> տեսակի բջջային հեռախոսի շահագործման ընթացքում որևէ սոցիալական կայք այցելություն կատարելու՝ այդ թվում նաև որպես օգտատեր մուտք գործելու նպատակով, օգտագործվել է նույն հեռախոսի գործավարական համակարգում տեղակայված <<Web Browser>> բջջային հավելվածը: Ինչի արդյունքում՝ <<GT-S5300>> տեսակի բջջային հեռախոսի շահագործման ընթացքում որևէ սոցիալական կայքի միջոցով հեռահաղորդակցական կապի վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես՝ այլ օգտատերերի հետ հնարավոր կատարված հեռահաղորդակցական կապի վերաբերյալ տեղեկատվությունը /օրինակ՝ նամակագրության բովանդակությունը/ հնարավոր չէ պարզել: Նշված հեռախոսի գործավարական համակարգում տեղակայված <<Web Browser>> բջջային հավելվածում առկա և նրանից վերականգնված տեղեկատվության հետազոտությամբ հնարավոր է միայն պարզել համացանցային կայքերի՝ այդ թվում նաև սոցիալական կայքերի, միայն այցելության վերաբերյալ տեղեկատվությունը:

<<GT-S5300>> տեսակի բջջային հեռախոսի ներքին և արտաքին հիշողության կրիչների ջնջված լուսանկարների և տեսաձայնագրությունների վերականգնման նպատակով կատարված հետազոտությամբ պարզվել է, որ վերականգնված ֆայլերի թվում առկա են կիսավնասված և ամբողջությամբ վնասված ֆայլային կառուցվածքով ֆայլեր:

Վերականգնված ֆայլերի ֆայլային կառուցվածքների վնասվածության փաստը պայմանավորված է <<GT-S5300>> տեսակի բջջային հեռախոսի ներքին և արտաքին հիշողության կրիչների վերագրառումով նոր տեղեկատվությամբ: Օրինակ՝ օգտատիրոջ կողմից ջնջվել են լուսանկարներ, որոնք ներբեռնված են եղել համացանցային կայքերից, հեռահաղորդակցման եղանակով այլ անձանց կողմից ուղարկված, կամ բջջային հեռախոսի միջոցով կատարված լուսանկարներ:

Բացի այդ, ջնջված լուսանկարներ կան նաև բջջային հավելվածների քեշերից, որոնք կարող էին ջնջվել ինչպես օգտատիրոջ կողմից, այնպես էլ ավտոմատ եղանակով՝ պայմանավորված թե համացանցային կայքերի և թե բջջային հեռախոսի գործավարական համակարգի կարգաբերումներից:

<<GT-S5300>> տեսակի բջջային հեռախոսի ներքին և արտաքին հիշողության կրիչներից վերականգնված լուսանկարների և տեսաձայնագրությունների ջնջման ժամանակի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, այսինքն՝ հնարավոր չէ պարզել, թե երբ են ջնջվել այդ ֆայլերը:

Փորձաքննության ներկայացված <<Samsung>> ապրանքանիշի <<GT-E1202i>> տեսակի բջջային հեռախոսի հետազոտությամբ հնարավոր է եղել պարզել միայն վերջինիս ներքին հիշողության կրիչում առկա կարճ հաղորդագրությունների, կոնտակտային հեռախոսահամարների, ինչպես նաև բջջային հեռախոսի սև ցուցակում և նշումներում առկա գրառումների վերաբերյալ տեղեկատվությունը: Նշված հեռախոսի ներքին հիշողության կրիչից ջնջված որևէ տեղեկատվություն հնարավոր չի եղել պարզել:

Պարզվել է նաև, որ նշված հեռախոսի տեխնիկական առանձնահատկության, մասնավորապես՝ համացանցի և <<Biuetooth>> տեխնոլոգիաների, ինչպես նաև տեսախցիկի բացակայության պայմաններում, այդ հեռախոսի շահագործման ընթացքում համացանցային հեռահաղորդակցական կապը, ինչպես նաև բջջային հեռախոսի ներքին հիշողության կրիչում օգտատիրոջ կողմից կատարված լուսանկարների և տեսաձայնագրությունների առկայությունը բացառվում է:

Նշված հեռախոսներում առկա տեղեկատվությունը վարույթն իրականացվող մարմնին տրամադրվել է լազերային սկավառակով>>:

<<GT-S5300>> տեսակի նշված բջջային հեռախոսի տեղեկատվության համաձայն, Ա.Մխիթարյանի կողմից օգտագործվող 098-96-32-74 հեռախոսահամարին անպատասխան հեռախոսազանգեր են գրանցվել վերջինիս սիրած աղջկա՝ Օֆելյա Վահանյանի կողմից օգտագործված 094-37-83-63 հեռախոսահամարից՝ 26.03.2016թ., 21.04.2016թ., 23.04.2016թ., 24.04.2016թ., 26.04.2016թ., 27.04.2016թ., 18.05.2016թ., 27.05.2016թ., 28.05.2016թ., 29.05.2016թ-ին երկու, 04.06.2016թ-ին երկու, 05.06.2016թ-ին երկու, 11.06.2016թ., 25.06.2016թ-ին երկու, 26.06.2016թ-ին երկու, 29.06.2016թ-ին երեք և 04.07.2016թ-ին, որոնց դեպքում նրա հեռախոսահամարը անհասանելի է եղել:

Օֆելյա Վահանյանի կողմից օգտագործվող 094-37-83-63 հեռախոսահամարից առկա են նաև Ա.Մխիթարյանին ուղարկված կարճ հաղորդագրություններ /sms/՝ անձնական բնույթի, որոնց թվում՝ 23.05.2016թ-ի ժամը 18:36:54-ին ուղարկված հաղորդագրության տեքստից / Արսեն ես գտնում եմ, որ սխալ է մեր խոսելը, մենք լրիվ տարբեր մարդիկ ենք, դու ավելի լավ կլինի ուրիշին գտնես ով իսկականից քեզ արժանի է, լավ մնա հաջող/ երևում է, որ վերջիններս վիճաբանել են, ինչը շարունակվել է այդ և հաջորդ օրը /23.05.2016թ-ի ժամը 22:47:10-ին՝ <<էս համարը էլ իմ մոտ չի լինելու, չզանգես>> և 24.05.2016թ-ի ժամը 00:03:11-ին՝ <<Չես հասկանում մի զանգի>>/:

Այլ անձանց կողմից Ա.Մխիթարյանին ուղարկված կարճ հաղորդագրություններ /sms/ չկան, բացառությամբ <<Vivacell-MTS>> կողմից ուղարկված՝ տարբեր ծառայությունների մատուցման և առաջարկությունների վերաբերյալ, ինչպես նաև <<Global SMS>> ծառայության մատուցման՝ <<Facebook>> սոցիալական կայքերին միանալու համար:

Դատահամակարգչատեխնիկական փորձաքննության թիվ 55791606 եզրակացությունը փաստում է այն մասին, որ բացի նշված տվյալներից, այլ տվյալները հնարավոր չի եղել վերծանել, որը էական նշանակություն կարող էր ունենալ գործի համար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արսեն Մխիթարյանը Օֆելյա Վահանյանի հետ մշտապես շփվել է հեռախոսակապով, այդ թվում՝ համացանցային կայքերի միջոցով, ինչպես նաև ուղարկված կարճ հաղորդագրությունների /sms/ միջոցով:

Բացի այդ, առկա են տվյալներ Արսեն Մխիթարյանի հոր՝ Արթուր Մխիթարյանի կողմից օգտագործվող 093-20-33-87 հեռախոսահամարից, ինչպես նաև այլ բաժանորդների հեռախոսահամարներից կատարված մուտքային զանգեր, որոնց դեպքում նույնպես Ա.Մխիթարյանի հեռախոսահամարը անհասանելի է եղել:

Քննությանը հետաքրքրող ժամանակահատվածում՝ 24.06.2016 թվականից մինչև 03.07.2016 թվականը ներառյալ /մինչև դեպքի հայտնի լինելը/, Ա.Մխիթարյանի հեռախոսահամարին հիմնականում ելքային և մուտքային բազմաթիվ հեռախոսազանգեր են գրանցվել Օֆելյա Վահանյանի հեռախոսահամարից, իսկ վերջին անգամ 30.06.2017 թվականին:

Եղել են նաև այլ բաժանորդների հետ մուտքային և ելքային հեռախոսազանգեր, որոնց կապակցությամբ քննություն է կատարվել և գործի համար նշանակություն ունեցող տվյալներ ձեռք չեն բերվել՝ պարզվել է, որ դրանք եղել են ծառայողական և անձնական հարցերի վերաբերյալ հեռախոսազանգեր:

01.07.2016 թվականին և 02.07.2016 թվականին Արսեն Մխիթարյանի նշված հեռախոսահամարին եղել են ընդամենը երկու մուտքային հեռախոսազանգեր՝ 01.07.2016 թվականին ժամը 10:09-ին 098-69-54-42 հեռախոսահամարից եղել է մեկ մուտքային զանգ, որը ըստ գործի տվյալների կատարվել է ՀՀ ՊՆ 21127 զորամասի 2-րդ ՀԳ ժամկետային զինծառայող, շարքային Ռազմիկ Հակոբյանի կողմից օգտագործվող հեռախոսահամարից, որի տևողությունը կազմել է 0,15 վայրկյան, իսկ մյուս հեռախոսազանգը եղել է 02.07.2016 թվականին ժամը 20:22-ին Արսեն Մխիթարյանի հոր՝ Արթուր Մխիթարյանի կողմից օգտագործվող 093-20-33-87 հեռախոսահամարից: Ըստ գործի տվյալների, այդ օրը՝ 02.07.2016 թվականին եղել է Արսեն Մխիթարյանի քրոջ ծննդյան տարեդարձը և վերջինս հեռախոսազրույցի ժամանակ իր հարազատներին հայտնել է, որ մոռացել է քրոջ տարեդարձի մասին, նրանց հետ խոսել է նաև այլ անձնական հարցերի շուրջ, որից հետո հայտնել է, որ իր համար հարմար չէ խոսելը և ըստ տուժողի իրավահաջորդ Արթուր Մխիթարյանի ցուցմունքների, այդ խոսակցության ժամանակ որդին շատ ուրախ է եղել և նրա պահվածքում տարօրինակ որևէ բան չի նկատել:

Նախաքննության ընթացքում որոշումներ են կայացվել նշված հենակետի բոլոր զինծառայողների, այդ թվում՝ Արսեն Մխիթարյանի, ինչպես նաև վերջինիս սիրած աղջկա՝ Օֆելյա Վահանյանի և վերջինիս եղբոր՝ Հրաչյա Վահանյանի կողմից օգտագործված բջջային հեռախոսահամարների քննությանը հետաքրքրող ժամանակահատվածի մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանման թույլտվություն ստանալու միջնորդություններ հարուցելու մասին, որոնք դատարանի կողմից միջնորդությունները բավարարվելուց հետո վերծանումները ստացվել են և զննության ենթարկվել:

Վերծանումների արդյունքներով պարզվել է, որ Արսեն Մխիթարյանի կողմից օգտագործված հեռախոսահամարից դեպքի օրը ելքային զանգեր չեն եղել, իսկ մուտքային զանգեր եղել են վերջինիս դեպքից հետո՝ դեպքի մասին տեղեկանալով նրան մի քանի անգամ զանգահարել է նրա սիրած աղջիկը՝ Օֆելյա Վահանյանը: Վերջինիս հետ Ա.Մխիթարյանի վերջին հեռախոսային խոսակցությունը՝ ըստ վերծանումների, եղել է 30.06.2016 թվականին:

Նախաքննությամբ պարզվել է, որ 30.06.2016 թվականին Արսեն Մխիթարյանը և Օֆելյա Վահանյանը վիճաբանել են Օֆելյա Վահանյանի կողմից <<Բիլայն>> ընկերությունում աշխատանքի ընդունվել մասին հայտնելու կապակցությամբ, որին վերջինս դեմ է եղել և օրեր շարունակ այդ հարցով խոսել և վիճաբանել են, Ա.Մխիթարյանը նրանից պահանջել է, որ մինչև իր բանակից վերադառնալը որևէ աշխատանքի չընդունվի:

Նշված հանգամանքը հաստատվել է ինչպես Օֆելյա Վահանյանի ցուցմունքներով, այնպես էլ նրանց հեռախոսային խոսակցությունների վերծանումների տվյալներով՝ 25.06.2016 թվականից մինչև 30.06.2016 թվականը ներառյալ: Նշված օրերին Արսեն Մխիթարյանի կողմից օգտագործվող հեռախոսահամարից Օֆելյա Վահանյանի հեռախոսահամարին եղել են բազմաթիվ տևական ժամանակով մուտքային հեռախոսազանգեր, այդ թվում՝ գիշերային ժամերին, մասնավորապես՝ ժամը 03-ի սահմաններում թվով 6 հեռախոսազանգեր:

Հանգամանքը հիմնավորվել է նաև <<Բիլայն>> ընկերությանը ուղարկված համապատասխան հարցման պատասխանով, որով մասնավորապես նշվել է, որ Օֆելյա

[illegible]մանը, 2016 թվականի հունիսի 26-ից մինչև հուլիսը 4-ը ընկած ժամանակահատվածում, փորձաշրջան է անցել <<CTV>> ընկերությունում՝ հետագայում <<ԱրմենՏել>> ՓԲԸ-ում շրջիկ վաճառքներ իրականացնելու համար:

Բացի այդ, 30.06.2016 թվականին Արսեն Մխիթարյանին թիվ 5-րդ դիտակետում ժամը 10^{20}-ի սահմաններում փոխարինման գնացող դիտորդը Արամ Հովհաննիսյանը մինչև դիտակետ հասնելը պատահաբար լսել է Ա.Մխիթարյանի հեռախոսով վիճաբանության ձայները և արտահայտությունը. <<Աղջի, հո դու ապուշ չես>>, որից հետո վերջինս տեսնելով Ա.Հովհաննիսյանին, անմիջապես անջատել է հեռախոսը և չցանկանալով հարցը քննարկել, նրա հարցին պատասխանել է, որ ամեն ինչ նորմալ է:

Արամ Հովհաննիսյանը ցուցմունքներ է տվել նաև այն մասին, որ 03.07.2016 թվականին ժամը 02^{20}-ից մինչև 04^{20}-ը թիվ 9 դիտակետում և ժամը 04^{20}-ից մինչև 06^{20}-ը արթուն հերթափոխում՝ գետնատնակի մոտ գտնվող դիտակետում, Արսեն Մխիթարյանի հետ հերթապահություն կատարելու ժամերից մեկի ժամանակ, վերջինս իրեն խորհուրդի կարգով հարցրել է. <<ընկերուհիս ուզում է աշխատի, բայց ես չեմ ուզում, ասեցի սպասի մինչև վերջացնեմ գամ մի բան կանենք>> ինչ կարող է անել այդ դեպքում: Իր համար անսպասելի և զարմանալի է եղել Ա.Մխիթարյանի խորհուրդ հարցնելը և սիրած աղջկա մասին խոսելը, ելնելով նրա բնավորությունից և այն հանգամանքից, որ մինչ այդ և այդ ժամանակ նման հարցերի շուրջ իրենք չեն խոսել: Ա.Մխիթարյանի անսպասելի խոսակցությունից և զարմանալի հարցից սկսել է մտածել, սակայն որևէ հարց կամ բառ նրան չի ասել՝ լավ իմանալով վերջինիս բնավորությունը: Նրա այդ հարցին չի պատասխանել, մտածելով, որ իր կարծիքը Ա.Մխիթարյանի համար դուրեկան չի լինի և ավելորդ խոսակցություններ կարող են իրենց միջև առաջանալ, քանի որ այդ հարցով ինքը մտածել է, որ որևէ բան չկա նրա մեջ, որ սիրած աղջիկը ուզում է աշխատել, իսկ նա այլ կարծիքի է եղել: Ա.Մխիթարյանը այդ խոսակցությունը չի շարունակել և այդ թեմայով իրենք այլևս չեն խոսել:

Ա.Հովհաննիսյանը հայտնել է նաև, որ Ա.Մխիթարյանի բնավորությունը այնպիսին է եղել, որ նա չի սիրել, որ իրեն հարցեր են տվել, ինչ-որ բաներով հետաքրքրվել, երբ որ նա ցանկացել է, իր հետ խոսել է, իսկ երբ ինչ-որ հարցով շատ է խորացել, ապա նա կամ կարճ կոնկրետ է իրեն պատասխանել, կամ էլ կոպիտ ձևով՝ հասկացնելով, որ այլևս չի ցանկանում իր հետ խոսել: Ա.Մխիթարյանի հետ ինչ-որ չափով մտերիմ լինելով և նրա բնավորության գծերը իմանալով, նրան հարցեր չի տվել և սպասել է, որ նա խոսակցություն վարի: Այդ նույն ձևով նրա հետ խոսել է նշված օրը, խոսել են առօրյա ծառայողական մի շարք հարցերի մասին, որոնք սովորական զրույց է եղել դրա համար այդ զրույցը իր մոտ չի տպավորվել, միայն տպավորվել է նրա կողմից սիրած աղջկա մասին նշված խոսակցությունը, որը իր մոտ զարմանք է առաջացրել:

Ա.Մխիթարյանի բնավորության գծերից ելնելով, իր համար հասկանալի չի եղել, թե նա նշված խոսակցության ժամանակ կամ այլ դեպքերում ինչի մասին է մտածել, մտահոգ է եղել, թե ոչ, քանի որ նա անընդհատ լուռ է եղել, չի խոսել, իրեն շատ լուրջ է պահել: Մյուս զինծառայողների մոտ ինչ-որ մտահոգության դեպքում նրանց պահվածքից մտահոգությունները դասկանալի են եղել, իսկ Ա.Մխիթարյանի դեպքում չի նկատվել, քանի որ նա միշտ նույն պահվածքով է իրեն պահել:

Օֆելյա Վահանյանը իր ցուցմունքներում վերը նշված հանգամանքի շուրջ հայտնել է նաև, որ ուսումը շարունակելու համար իրեն անհրաժեշտ է եղել վճարել ուսման վարձ և այդ նպատակով է ցանկացել աշխատել, քանի որ ծնողները իր ուսման վարձը վճարելու նարավորություն չեն ունեցել, իսկ Արսեն Մխիթարյանը կտրականապես դեմ է եղել իր աշխատելուն և դրա համար էլ իրենք նշված ժամանակ վիճաբանել են: Վիճաբանել են նաև դանից առաջ՝ անձնական մի շարք հարցերով, որոնց մասին Օ.Վահանյանը չի ցանկացել ամբողջությամբ հայտնել՝ օգտվելով վկայի իր իրավունքներից:

Օ.Վահանյանը իր ցուցմունքներում նշել է նաև, որ 2016 թվականի մարտ ամսին, Ա.Մխիթարյանը զանգահարել է իրեն և ասել, որ այլևս իրար հետ չեն շփվելու և առաջարկել է մնալ որպես դասարանցիներ: Ինքը հարցրել է, թե ինչն է պատճառը, նա էլ ասել է, որ այդպես է որոշել և ճիշտը դա է: Ինքն էլ ասել է, որ, եթե այդպես է որոշել թող իր ուզածով լինի և անջատել է հեռախոսը: Նույն օրը Ա.Մխիթարյանը կրկին զանգահարել է իրեն և ասել, որ չտխրի և որ ինքը արժանի չէ իրեն, սակայն իրենց բաժանման մասին որևէ պատճառ չի նշել: Դրանից հետո շուրջ մեկ ամիս իրենք չեն շփվել՝ 2016 թվականի մարտի կեսերից մինչև ապրիլի կեսերը և այդ ժամանակ նա կրկին զանգահարել է իրեն և ասել, թե չգիտի, թե ինչ է իր հետ կատարվում՝ կարծել է, որ կարող է առանց իրեն, սակայն չի կարողանում: Դրանից հետո իրենք սկսել են նորից իրար հետ հեռախոսով շփվել և այդ ժամանակ Ա.Մխիթարյանը իրեն ասել, է որ այդ մեկ ամսվա ընթացքում 10 օրով արձակուրդում է եղել, բայց իրեն չի զանգահարել: Այդ ժամանակ նա ուրախ է եղել և ոչինչից չի դժգոհել և լավատեսորեն իրեն ասել է, որ <<աջը>> քաշած խելոք իր համար ծառայում է, ինչ ասում են խելոք անում է:

2016 թվականի մայիսի կեսերից, Ա.Մխիթարյանը գրեթե ամեն օր տխուր է եղել, իր հետ խոսելուց այլևս չի կատակել, ասել է, որ տրամադրություն չունի, հետո կզանգահարի: Ինքը մշտապես նրան հարցրել է, թե ինչ է տեղի ունեցել և ով է իրեն նեղացրել, կամ ինչից է նեղվում, նա իրեն ոչինչ չի ասել, որևէ մեկի անուն չի տվել և երբեք չի ասել, որ կռիվ է արել կամ իրեն ծեծել են, միայն ասել է, որ ծառայության վայրում ոչ մի ընկեր չունի, իր հետ ծառայողներին ոչինչ չի արել, բայց չգիտի, թե ինչու են նրանք իր նկատմամբ վատ տրամադրված: Իրեն ասել է նաև, որ շատ մտերիմ է այդ վայրի բուժկետում աշխատող սպա բժիշկի հետ՝ ով իր ազգականն է և որ ամեն հարցով նրա հետ է կիսվում և նա էլ իրեն ամեն հարցով օգնում է:

Այդ ժամանակ Ա.Մխիթարյանը վատ տրամադրության պատճառով չի կարողացել իր հետ շփվել, ամեն անգամ իրեն պատճառաբանել է, որ հավես չունի կամ տրամադրություն չունի շփվելու, հետո կզանգահարի, սակայն չի զանգահարել, իսկ երբ ինքն է զանգահարել նա իրեն պատճառաբանել է, որ հարմար չի եղել զանգահարելու և հետո կրկին ասել է, որ տրամադրություն չունի զրուցելու և խոստացել է, որ հետո կզանգահարի և այդպես շարունակել: Քանի որ Ա.Մխիթարյանը իրեն անհաճոյացնող պատճառների մասին իրեն ոչինչ չի ասել և ամեն անգամ իրենց խոսակցությունը հետաձգվել է, այդ պատճառով նրան ասել է, որ իրեն այլևս չզանգահարի, և որ հեռախոսահամարը փոխում է: Դրանից հետո նա մի քանի անգամ զանգահարել է իրեն՝ փորձելով պահել իրենց հարաբերությունները, սակայն Ա.Մխիթարյանից վիրավորված լինելով նրան հաղորդագրություն է գրել, որ հեռախոսահամարը իր մոտ չի լինելու և իրեն չզանգահարի, սակայն նա շարունակել է իրեն զանգահարելը, իսկ ինքը տարբեր պատճառաբանություններ ներկայացնելով փորձել է չպատասխանել նրա զանգերին: Նույնիսկ նրան ասել է, որ իրար չեն հասկանում և որ ինքը նրան արժանի չէ և խորհուրդ է տվել, որ նա իր կյանքը ուրիշի հետ կապի, սակայն Արսենը իր համառության շնորհիվ ամեն անգամ զանգելով վերականգնել է իրենց հարաբերությունները: Դրանից հետո ամեն օր զրուցել է նրա հետ, սակայն նրա տրամադրությունը չի փոխվել, նա մշտապես անտրամադիր է եղել, իսկ երբ շարունակել է նրան հարցնել, թե ինչն է պատճառը, նա իրեն պատասխանել է, որ այլևս չի կարողանում իր համածառայակիցների հետ ծառայել, կոնկրետ որևէ անուն և պատճառ չի նշել, միայն ասել է, որ դա իր հետ քննարկելու թեմա չէ: Ինքն էլ նրան ասել է, որ եթե խնդիրներ ունի ինչ-որ մեկին դիմի, իսկ նա ասել է, որ դիմելու կարիք չկա, ինքը իր խնդիրները կլուծի:

Օ.Վահանյանը հայտնել է նաև, որ Ա.Մխիթարյանի կողմից ծառայությանը հարմարվելու կապակցությամբ դժվարանում է կոնկրետ հանգամանքներ հայտնել, քանի որ վերջինս միայն իրեն ասել է, որ իր համար ավելի լավ է բարձրանալ դիրքեր, քան թե գտնվել զորամասում, քանի որ դժգոհել է այնտեղ շարային պարապմունքներից՝ ամբողջ օրը արևի կամ անձրևի տակ այն կատարելուց: Ասել է նաև, որ զորամասում գտնվելու ժամանակ օրերն է հաշվել, թե երբ է լրանալու 14 օրը, որ կրկին բարձրանան դիրքեր, իսկ դիրքերում իրեն ավելի հանգիստ է զգացել և դժգոհություններ չի հայտնել:

Վերջին մեկ ամսվա ընթացքում Ա.Մխիթարյանը հաճախակի է իրեն դժգոհել իր համաձառայակիցներից և իրեն բառացի ասել է. <<նրանց ձեռքը ճար լինի ինձ գլխից կխփեն>>, դա իրեն ասել է 2016 թվականի հունիսի կեսերին, սակայն չի ասել, թե ով կարող է այդպիսի բան անել: Նա կոնկրետ չի ասել զորամասի, թե դիրքի զինվորների հետ խնդիրներ ունի, ընդհանուր է դժգոհել համաձառայակիցներից և ասել է, որ ոչ մեկի հետ չի շփվում: Ինքը հարցրել է, թե արմավիրցիներից մարդիկ չկան, որ նրանց հետ շփվի, նա էլ պատասխանել է, որ բոլորն էլ նույնն են: Նա այդ հարցերի մասին լուրջ է խոսել, այդ ժամանակվանից միշտ տխուր է եղել, չի կատակել, այդ կապակցությամբ իր տված հարցերին չի պատասխանել, միայն կոպիտ տոնով ասել է, որ այդ հարցը չի քննարկվում, և այդպես էլ իրեն հայտնի չի եղել, թե ում հետ է նա խնդիրներ ունեցել և ինչն է եղել պատճառը, այլ հարցերից նա դժգոհություններ չի հայտնել:

Վերջին խոսակցության ժամանակ՝ 2016 թվականի հունիսի 30-ին, ինքը Ա.Մխիթարյանին ասել է, որ աշխատանք է ճարել <<Բիլայն>> ընկերությունում՝ Երևանի Կոմիտաս թաղամասում գտնվող գրասենյակում, որպես օպերատոր: Նա միանգամից ասել է, որ համաձայն չէ և ավելացրել. <<դեռ մտքիցդ չես հանել այդ մտադրությունը>>: Նախկինում ինքը մի քանի անգամ նրան ասել է, որ ցանկանում է աշխատանք գտնել և աշխատել, սակայն նա միշտ դեմ է եղել և փորձել է իրեն հակառակը համոզել: Ինքն էլ նրան ասել է, որ չի մտափոխվել, ցանկանում է աշխատել, քանի որ մտադրություն ունի կրթությունը շարունակելու, իսկ դրա համար գումար է անհրաժեշտ: Նա էլ ասել է, որ գումարը ծնողները կտան, քանի որ վճարել են ուսման վճարը: Ինքը նրա առաջարկին չի համաձայնվել և պնդել է, որ ցանկանում է աշխատել, որից հետո նա զայրացած իրեն հարցրել է. <<հաստատ ես որոշել>>, ինքն էլ պատասխանել է, որ այո, որոշել է: Դրանից հետո հեռախոսը անջատվել է և ինքը կարծել է, որ մարտկոցն է լիցքաթափվել, քանի որ նա իրեն մինչ այդ ասել է, որ մարտկոցը լիցքաթափվում է, հետագայում այդ մասին մտածելով ենթադրում է, որ նա հեռախոսը անջատել է՝ իր վրա բարկացած լինելու համար: Դրանից հետո Ա.Մխիթարյանին ինքը չի զանգահարել և նրա հետ չի խոսել:

Օ.Վահանյանը հայտնել է նաև, որ Ա.Մխիթարյանը դպրոցական տարիներին եղել է չշփվող, սովորող աշակետ, դպրոցը ավարտելուց հետո նրան մի քանի անգամ է տեսել իրենց քաղաքում կամ երթուղայինում: Նրա հետ ընկերություն անելու սկզբում նա եղել է ջերմ և ուրախ, իսկ վերջին մեկ ամիսը մշտապես տխուր է եղել, նույնիսկ նորմալ իր հետ չի շփվել:

Իրեն հայտնի չէ Ա.Մխիթարյանի մահվան պատճառը, սակայն իր կարծիքով նա ինքնասպանություն կատարելու ոչ մի լուրջ պատճառ չի ունեցել:

Օ.Վահանյանը իր ցուցմունքներում հայտնել է նաև, որ իրենց հարաբերությունների ընթացքում եղել են դեպքեր, որ իրենք վիճել են և վիճաբանությունից զայրացած Ա.Մխիթարյանին ասել է, որ չի սիրում և ուրիշի հետ կամուսնանա, սակայն դրանից հետո իրենք նորից հաշտվել են և սովորականի պես շարունակել իրենց շփումները: Ինքը չի հիշում, թե կոնկրետ երբ է այդ խոսքերը նրան ասել, դա եղել է նրա մահվան դեպքից մի քանի ամիս առաջ:

<<Բիլայն>> ընկերությունում աշխատանքի անցնելու համար դիմել է 2016 թվականի հունիս ամսին, կոնկրետ օրը չի հիշում, որոշ ժամանակ անց իրեն հրավիրել են հարցազրույցի, 26.06.2016 թվականից մինչև 04.06.2016 թվականը ներառյալ, այնտեղ աշխատել է, որից հետո իր ցանկությամբ աշխատանքից ազատվել է:

Ա.Մխիթարյանին աշխատանքի ընդունվելու մասին նախորոք տեղյակ չի պահել, քանի որ նա դեմ է եղել իր աշխատելուն:

Օ.Վահանյանը հայտնել է նաև, որ կարճ հաղորդագրություններով Ա.Մխիթարյանի հետ շատ չեն շփվել, հաճախակի շփվել են <<Facebook>> սոցիալական կայքով:

Վերջիններիս միջև պարբերաբար վիճաբանելու հանգամանքը հաստատվել է նաև վերը նշված <<SMS>> կարճ հաղորդագրությունների տվյալներով, նրանց հեռախոսային խոսակցությունների վերծանումների տվյալներով, որտեղից երևում է, որ 2016 թվականի

հունվար ամսից մինչև դեպքի օրը ներառյալ, ժամանակ առ ժամանակ նրանց միջև հեռախոսային խոսակցություններ չեն եղել, իսկ մյուս դեպքերում եղել են բազմաթիվ ելքային և մուտքային հեռախոսազանգեր՝ տևական ժամանակով և գրեթե ամեն օր, այդ թվում՝ օրվա ընթացքում մի քանի և ավելի զանգեր:

Քրեական գործի նախաքննության ընթացքում հարցաքննվել են Արսեն Մխիթարյանի ստորաբաժանման և զորամասի հրամանատարական կազմի սպաները, համածառայողները, ինչպես նաև զորամասի մի շարք ժամկետային զինծառայողները, վերջինիս համաերկրացիները և այլ անձինք, ովքեր ինչ-որ չափով առնչություն են ունեցել Ա.Մխիթարյանի և նրա դեպքի հետ: Վերջիններս իրենց ցուցմունքներում բացառել են Ա.Մխիթարյանին սպանելու վարկածը և հիմնականում կարծիք են հայտնել այն մասին, որ նա ինքնասպան է եղել իր սիրած աղջկա հետ վիճաբանելու պատճառով, ինչի մասին զորամասում շատերն են խոսել: Վերջիններս, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ պարզելու նպատակով հարցաքննված Ա.Մխիթարյանի հարազատները, համադասարանցիները և ուսուցիչները, Ա.Մխիթարյանին բնութագրել են որպես չշփվող, ինքնամփոփ, խելացի, քչախոս, կոնֆլիկտների մեջ չմտնող անձնավորության: Պարզվել է նաև, որ վերջինս ընկերներ չի ունեցել:

Արսեն Մխիթարյանի 5-6-րդ դասարանների դասղեկ՝ Անահիտ Կոնստանտինի Ավետիսյանը իր ցուցմունքում Ա.Մխիթարյանին դրական է բնութագրել և մասնավորապես հայտնել, որ նա եղել է օրինակելի վարքով, մեղմ բնավորությամբ, պատասխանատու վերաբերմունքով անձնավորություն: Դասերից չի բացակայել, ունեցել է լավ դաստիրակություն և հարգալից է վերաբերվել բոլորին:

Արսեն Մխիթարյանի 11-12-րդ դասարանների դասղեկը՝ Էմիլյա Մաքսիմի Մանուչարյանը իր ցուցմունքում հայտնել է, որ Ա.Մխիթարյանը բնավորությամբ եղել է ինքնամփոփ, դժվար շփվող, լռակյաց, զուսպ, հավասարակշռված, հարգված և սիրված անձ: Երբևէ կոնֆլիկտ չի ստեղծել և չի հայտնվել նման իրավիճակում: Շփումների ժամանակ պահպանել է որոշակի հեռավորություն: Չի ունեցել բնավորության անլուրջ կողմեր և չի սիրել խառնվել վատ իրավիճակների, բայց օժտված է եղել նուրբ հումորով: Դժվարությունները աշխատել է հաղթահարել ինքնուրույն, խուսափել է օգնության դիմելուց: Ավելի շատ խուսափել է անցանկալի իրավիճակներից, քան կհայտվեր դրանցում: Խուսափել և երբեմն հրաժարվել է մասսայական իրավիճակներից, ցերեկույթներից և չի բացատրել հրաժարման պատճառները:

Արսեն Մխիթարյանի հարազատները վերջինիս մահվան պատճառների մասին կոնկրետ փաստարկներ չեն հայտնել, միայն նրա հայրն իր ցուցմունքներում և կայք էջերի հրապարակումներում հայտնել է, որ իր որդին ինքնասպան չի եղել և որ նրան սպանել են, սակայն սպանության հանգամանքը հաստատող որևէ հիմնավոր փաստարկ չի հայտնել, այլ նշել է մի շարք ենթադրություններ, որոնք բազմակողմանի քննության առարկա են դարձել՝ ստուգվել, որի արդյունքում, ինչպես նաև գործում առկա մյուս բազմաթիվ փաստական տվյալների հիման վրա, այդ թվում՝ սույն որոշման մեջ նկարագրված, սպանության վարկածը, չի հաստատվել: Նախաքննությամբ հիմնավոր փաստեր են ձեռքբերվել և հիմնավորվել, որ կատարվածը ինքնասպանություն է և նախաքննության տվյալ փուլում հնարավոր վարկածները հանդիսանում են Ա.Մխիթարյանի և նրա սիրած աղջկա՝ Օ.Վահանյանի փոխհարաբերությունների պատճառը և Ա.Մխիթարյանի կողմից ծառայության նկատմամբ դրսևորած վերաբերմունքի և ծառայության հետ չհամակերպվելու հանգամանքը:

Մասնավորապես, գործով կան փաստական տվյալներ, որ Արսեն Մխիթարյանը դժկամությամբ է կատարել իր ծառայողական պարտականությունները, մասնավորաբար՝ ջոկի, դասակի և ստորաբաժանման մյուս հրամանատարական կազմի տարբեր ծառայողական հանձնարարությունները, որոնք տրվել են ինչպես անհատական, այնպես էլ մյուսների թվում, ճիշտ է վերջինս առանց հակաճառելու և անխոս կատարել է, սակայն նրա շարժ ու ձևից, դեմքի արտահայտությունից, ինչպես նաև ցուցաբերած վերաբերմունքից

համածառայակիցներին հասկանալի է եղել, որ նրա համար այդ հանձնարարությունները և ընդհանրապես ծառայողական մյուս հարցերը անցանկալի, անհետաքրքիր, տհաճ և հոգնեցնող հանգամանքներ են հանդիսացել: Այդ պատճառով Ա.Մխիթարյան ինչ-որ չափով իրեն մտերիմ համածառայակիցների մոտ որոշ դեպքերում իր դժգոհություններն է արտահայտել ջոկի հրամանատար Արամ Ղազարյանի և դասակի հրամանատար, լեյտենանտ Նարեկ Բաղդասարյանի կողմից իրեն տրված հանձնարարությունների կապակցությամբ, համարելով, որ վերջիններս իր դեմ լարված են, քանի որ հաճախակի են իրեն հանձնարարություններ տալիս: Մինչդեռ նրա համածառայակիցները, այդ թվում՝ մտերիմները, իրենց ցուցմունքներում այդ կապակցությամբ հայտնել են, որ վերը նշված անձինք, ինչպես նաև մյուս համածառայակիցներն իմանալով Ա.Մխիթարյանի բնավորությունը, նորմալ են համարել այն հանգամանքները, որ վերջինս դժկամությամբ է կատարել իր ծառայողական պարտականությունները, խուսափել է համածառայակիցների և այլ ծառայողների հետ շփվելուց, ընդհանուր խոսակցություններ վարելուց, իրեն տրված հարցերին հակիրճ և խուսափողական ձևով պատասխանելու հանգամանքները: Դրա համար էլ համածառայակիցները հարմարվել են Ա.Մխիթարյանի բնավորության հետ՝ շփվել են, երբ նա է ցանկացել, ավելորդ հարցեր նրան չեն տվել, խոսակցությունների մեջ չեն ծավալվել և ուշադրություն չեն դարձրել այն հանգամանքներին, որ նա առանձին է զորամասի թեյարան գնացել, առանձնացել և շփվել իր համար կոնկրետ իրադրությունում ցանկալի անձանց հետ, ընկերներ չի ունեցել և ինչ-որ չափով շփվել և մտերմություն է արել որոշ համածառայակիցների հետ:

Արսեն Մխիթարյանի բնավորության գծերը, ինչպես նաև ծառայության նկատմամբ դրսևորած վերաբերմունքի մասին հանգամանալից նշվել է վերջինիս հարազատի՝ ՀՀ ՊՆ 17193 զորամասի բժիշկ-ատամնաբույժ, ավագ լեյտենանտ Սասուն Մնացականի Ղազարյանի ցուցմունքում: Վերջինս իր ցուցմունքում մասնավորապես հայտնել է, որ 2015 թվականի ամռանն իր մորեղբոր որդին՝ Արսեն Մխիթարյանը, ծառայության անցնելով ՀՀ ՊՆ 21127 զորամասում, իր հետ հաճախակի է հանդիպել և պարբերաբար հեռախոսակապ հաստատել, քանի որ ծառայել են հարևանությամբ գտնվող զորամասերում: Նրա հետ գտնվել է շատ մտերիմ, եղբայրական հարաբերությունների մեջ: Նրան կարող է բնութագրել, որպես հանգիստ, համեստ, խելացի, ոչ կոնֆլիկտային և ոչ այնքան շփվող անձնավորության, որը ավելի շատ սիրել է միայնություն: Սակայն այդ ամենով հանդերձ նա հոգեկան որևէ շեղումներ չի ունեցել, եղել է ադեկվատ անձնավորություն:

ՀՀ ՊՆ 21127 զորամասում ծառայության նշանակվելուց մի քանի օր անց, գնացել է նշված զորամաս Ա.Մխիթարյանին տեսակցելու և իրենց հանդիպման ժամանակ հարցրել ծառայության հետ հարմարվելու և խնդիրների մասին, վերջինս էլ պատասխանել է, որ դեռ չի հասկանում, թե ինչ է կատարվում և ինչ-որ լուրջ խնդիրներ, պրոբլեմներ չի ներկայացրել, միայն գանգատվել է, որ զինվորական համազգեստը մի փոքր իր վրա մեծ է և անհարմար: Դրանից հետո մի քանի անգամ ևս տեսակցության է գնացել, բացի այդ, պարբերաբար հեռախոսով նրա հետ խոսել է և այդ ընթացքում համածառայողների կամ վերադաս հրամանատարության հետ կապված խնդիրներ չի ներկայացրել, միայն պարբերաբար դժգոհել է նրանից, որ իրենց շատ են աշխատեցնում և այդ ամենից հոգնում է: Դրանից հետո, 2015 թվականի դեկտեմբեր ամսին, Արսենը զորամասից առողջական խնդիրների պատճառով տեղափոխել է ՀՀ ՊՆ 17193 զորամաս՝ Բերդի զինվորական հոսպիտալ: Նրա մոտ ախտորոշվել է սուր շնչառական հիվանդություն, ընդունվել է ստացիոնար բուժման և մոտ մեկ ամիս բուժվելուց հետո՝ 2016 թվականի հունվարի սկզբներին, հոսպիտալից դուրս է գրվել լավացումով: Այդ ընթացքում, գրեթե ամեն օր, հանդիպել է նրան և զրուցել, որի ժամանակ նույնպես համածառայողների, վերադաս հրամանատարության, ինչպես նաև ծառայության հետ կապված խնդիրներ չի ներկայացրել, ասելով, որ բոլորի հետ էլ գտնվում է նորմալ փոխհարաբերությունների մեջ: Հոսպիտալից զորամաս վերադառնալուց հետո, շարունակել է հեռախոսով պարբերաբար զրուցել և այդ

ժամանակ հայտնել է, որ իր ստորաբաժանումը փոխել են և արդեն մարտական հերթապահության է ընդգրկվում: Դրանից հետո, կոնկրետ օրը չի հիշել, սակայն Ա.Մխիթարյանի արձակուրդից հետո, վերջինս զանգահարել է իրեն և ասել, որ Արմավիր քաղաքից մի աղջիկ կա, որի հետ շփվել է՝ ընկերություն է արել, և որ այդ մասին աղջկա ընտանիքի անդամները չգիտեն, սակայն վերջին հեռախոսային խոսակցության ժամանակ այդ աղջիկն իրեն ասել է, որ մայրը լսել է իրենց խոսակցությունը: Այդ ժամանակ Արսենը անհանգստացած է եղել, որ աղջկա մայրը կարող է իրենց հարաբերությունների մասին պատմել աղջկա եղբորը և նա էլ կարող է զանգել իրեն և պարզաբանումներ պահանջել այն հարցով, թե ինչու տեղյակ չի պահել, որ ընկերություն է անում իր քրոջ հետ: Այդ մասին իրեն պատմելուց հետո, Ա.Մխիթարյանն իրեն հարցրել է, թե նման դեպքում ինչ կարող է անել, եթե ինչ-որ մեկը զանգի իրեն և նման պարզաբանումներ պահանջի, խորհուրդ է տվել ասելու, որ գտնվում է ծառայության վայրում և հնարավորություն չի ունեցել եղբոր հետ հանդիպելու: Այդ ժամանակ նրանից պարզել է նաև, որ նա այդ աղջկա հետ ընկերություն է արել դեռևս արձակուրդ մեկնելուց առաջ, սակայն արձակուրդում գտնվելու ժամանակ որևէ մեկին չի հանդիպել, այդ թվում՝ այդ աղջկան: Բացի այդ, պարզել է նաև, որ նա այդ աղջկա հետ լուրջ մտադրության հարցով դեռևս չի կողմնորոշվել:

Այնուհետև, 2016 թվականի ապրիլ ամսվա վերջին, Արսենը զանգել է իրեն և խնդրել, որ այնպես անի, որ իրեն տանեն հոսպիտալ, քանի որ զորամասում ամեն օր ինժեներական աշխատանքներ են կատարել և բացի այդ, քննությունների են պատրաստվել և այդ ամենից հոգնել է և ցանկանում է հանգստանալ: Ինքն էլ նրան մերժել է և բացատրել, որ առանց առողջական խնդիրների, նրան չի կարող զորամասից հոսպիտալ տեղափոխել: Այդ խոսկցության ընթացքում նույնպես նա իր համածառայողների և վերադաս հրամանատարության հետ կապված խնդիրներ չի ներկայացրել, միայն պատճառաբանել է, որ հոգնել է ֆիզիկական ծանրաբեռնվածությունից: Դրանից մի քանի օր անց, հերթական հեռախոսային խոսակցության ժամանակ, Արսենն իրեն պատմել է, որ իրենց վաշտի պահեստարանում զբաղված է եղել աշխատանքով, երբ զինվորներից մեկը, որի անունը չի նշել, մի քանի անգամ հարվածել է պահեստարանի դռանը, ինքն էլ բերանով <<ճպացրել>> է՝ այդ կերպ իր վերաբերմունքը արտահայտելով, որից հետո այդ զինվորը իրենից պարզաբանումներ է պահանջել, թե ինչու է <<ճպացրել>>: Նրա հետ խոսել է և այդքանով խոսակցությունը ավարտվել է, իսկ դրանից հետո մեկ այլ զինվոր, որի անունը իրեն նույնպես չի նշել, իրեն ասել է, որ զինվորները իրենից բողոքում են, և մեջբերել է այդ միջադեպը և ավելացրել, որ պետք չէ նման ձևով արձագանքել և եթե ասելու բան ունի, ավելի լավ է խոսքերով բացատրել:

Այնուհետև, հարցրել է, թե նշված զինվորի հետ ինչ հարաբերությունների մեջ է գտնվում, նա էլ ասել է, որ այդ զինվորի հետ առնչություն չունի, չի շփվում և նա էլ իրենից հեռու է պահում: Այդ խոսակցության ժամանակ նրա մոտ տրամադրության անկում, ընկճվածություն չի զգացել, նա իրեն սովորականի պես է պահել: Դրանից հետո, 2016 թվականի մայիս ամսվա վերջերին, Արսենը զանգել է և նորից իրեն խնդրել հոսպիտալ տեղափոխելու հարցով՝ պատճառաբանելով, որ հոգնել է ծառայությունից և չի ցանկանում մարտական հենակետ բարձրանալ, ինքն էլ կրկին մերժել է:

2016 թվականի հունիս ամսվա ընթացքում, հերթական հեռախոսազրույցի ժամանակ, տեղեկացել է, որ ամսվա վերջ նորից մարտական հենակետ է բարձրանալու և խնդրել է իր համար ներքնազգեստ, սափրվելու պարագաներ, ձեռքի ժամացույց և մեկ տուփ <<Marllboro>> տեսակի ծխախոտ ուղարկի: Իր հարցեին, թե ինչու է հենց այդ ծխախոտը ուզում, պատասխանել է, որ ցանկանում է մեկ անգամ լավ ծխախոտ ծխել, և դրանք իր կողմից ուղարկվել են:

Դրանից հետո, վերջին անգամ Ա.Մխիթարյանի հետ հեռախոսով զրուցել է 2016 թվականի հունիսի 21-ին կամ 22-ին և այդ խոսակցության ժամանակ վերջինս հայտնել, որ

ստացել է իր ուղարկածը, ամեն ինչ նորմալ է, և որ մոտ մեկ շաբաթից բարձրանալու են մարտական հենակետ: Նրա մոտ այդ ժամանակ ևս տրամադրությունը նորմալ է եղել, ընկճվածություն չի նկատել և որևէ խնդիր իրեն չի ներկայացրել, որից հետո՝ 03.07.2016 թվականին ժամը 11^{00}-ի սահմաններում, տեղեկացել է Ա.Մխիթարյանի դեպքի մասին:

Արսեն Մխիթարյանի մահվան դեպքի և նրա հետ կապված այլ հանգամանքների մասին իրեն հայտնի չէ, կարող է ասել, որ նա առողջական որևէ լուրջ խնդիրներ չի ունեցել: Որքանով Արսենն իրեն պատմել է, համածառայողների և վերադաս հրամանատարության հետ գտնվել է նորմալ, ծառայողական փոխհարաբերությունների մեջ, դժգոհել է միայն շատ աշխատելուց և որ հոգնել է ֆիզիկիկան ծանրաբեռնվածությունից, ծառայության հետ կապված ուրիշ խնդիրներ չի ներկայացրել:

Երբևէ չի պատմել իր նկատմամբ որևէ մեկի կողմից բռնություն գործադրելու կամ պատիվն ու արժանապատվությունն ստորացնելու մասին:

Արսեն Մխիթարյանը մոլեխաղերի և թղթաղերի հանդեպ սեր, որևէ հակում չի ունեցել, կրոնական շեղումներ, աղանդավորական հակումներ նույնպես չի ունեցել, եղել է քրիստոնյա: Չի ունեցել նաև անձնական կամ ընտանեկան խնդիրներ: Ա. Մխիթարյանը հայտնել է նաև, որ զորամասում ընկերներ չունի, որևէ մեկի հետ մտերմություն չի անել, ինքն էլ զարմանալով դրանից, մի քանի անգամ ծանոթացրել է իր ծանոթ զինծառայողների հետ, որպեսզի շփվեն, ընկերություն անեն, սակայն հետագայում Ա.Մխիթարյանից տեղեկացել է, որ ծանոթանալուց հետո այդ զինվորների հետ չի շփվել և այդ կապակցությամբ որևէ պատճառաբանություն չի ներկայացրել:

Իրենք տարբեր քաղաքներում են ապրել և տեղյակ չէ, թե նա բնակության վայրում ընկերներ ունեցել է, թե ոչ: Չգիտի, թե Ա.Մխիթարյանին սպանելու շարժառիթ, դրդապատճառ եղել է, թե ոչ, այդ թվում՝ ինքնասպանության: Նա ինքնասպանություն կատարելու մտքեր իր մոտ չի արտահայտել և դրան միտված գործողություններ չի կատարել:

Ըստ գործի տվյալների, Արսեն Մխիթարյանը մինչև բանակ զորակոչվելը տառապել է գիշերային անմիզապահությունից, որի կապակցությամբ Արմավիրի զինկոմիսարիատի զորակոչային հանձնաժողովի կողմից ուղեգրվել է <<Սուրբ Գ.Լուսավորիչ>> բժշկական կենտրոն հետազոտության, սակայն վերջինս հետազոտությունից հետո բուժումից հրաժարվել է և գրավոր դիմելով տարածքային զինվորական կոմիսարին հայտնել է, որ գիշերային անմիզապահության գանգատներ այլևս չունի, և ճանաչվելով պիտանի զինվորական ծառայության 22.07.2015թ-ին Արմավիրի զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ զինված ուժեր և ծառայության նշանակվել ՀՀ ՊՆ 21127 զորամաս:

15.08.2015 թվականին նույն զորամասի հրամանատարի թիվ 229 հրամանով նշանակվել է զորամասի 2 ՀԳՄ 6ՀՎ 3ՀԴ 1 ՀՋ հրաձիգ նռնակաձիգի օգնական, իսկ 05.12.2015 թվականին զորամասի հրամանատարի թիվ 340 հրամանի համաձայն, Արսեն Մխիթարյանը ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, ազատվել է զբաղեցրած պաշտոնից և նշանակվել ՆՐԴ ՍՊԳ-9 նռնականետային ջոկի նշանառու:

Բացի այդ, նախաքննությամբ ձեռքբերված փաստական տվյալների համաձայն, Արսեն Մխիթարյանը միջև բանակ զորակոչվելը բացի նշված գիշերային անմիզապահության խնդրից, այլ առողջական խնդիրներ չի ունեցել: Եղել է ընտանիքի միակ որդին, երեխաներից ավագը, ծնողները և երկու քույրերը կապված են եղել նրա հետ, ընտանեկան խնդիրներ չեն եղել, այդ թվում՝ սոցիալական վիճակի հետ կապված:

Արսեն Մխիթարյանը քաղաքացիական կյանքում մտերիմ է եղել իրենից շուրջ 3 տարի փոքր տարիք ունեցող հարազատի հետ, այլ մտերիմ, ընկեր չի ունեցել, նույնը և բանակում ծառայելու ընթացքում, որտեղ ուղղակի շփվել է մի քանի զինծառայողների հետ, իսկ մյուսների հետ խուսափել է շփվելուց, այդ թվում՝ համաերկրացիներից:

Օֆելյա Վահանյանի հետ եղել են համադասարանցիներ, սակայն նրանց շփումները՝ ընկերությունը, սկսվել է 2016 թվականի հունվար ամսից, երբ Արսեն Մխիթարյանը արդեն իսկ գտնվել է ծառայության մեջ, դրա համար շփվել են միայն հեռախոսակապով: Ծառայության ընթացքում՝ 2016 թվականի մարտ ամսին, Արսեն Մխիթարյանին տրամադրվել է կարճաժամկետ արձակուրդ, սակայն վերջինս Օֆելյա Վահանյանի հետ չի հանդիպել, քանի որ մինչ այդ վիճաբանել են, իսկ արձակուրդից վերադառնալուց որոշ ժամանակ անց նրանց հեռախոսային խոսակցությունների միջոցով շփումները շարունակվել են:

Արսեն Մխիթարյանը ունեցել է թերի բարձրագույն կրթություն՝ սովորել է Մ.Հերացու անվան բժշկական համալսարանի ատամնաբուժական ֆակուլտետում, որտեղ 1-ին կուրսը ավարտելուց հետո զորակոչվել է բանակ:

Նկատի ունենալով, որ Արսեն Արթուրի Մխիթարյանի ինքնասպանության հնարավոր պատճառը, նրա հոգեկան վիճակը և քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքների պարզումը հնարավոր է միայն դատահոգեբանության և դատահոգեբուժության բնագավառներում հատուկ գիտելիքների կամ հետազոտության տարբեր մեթոդիկաների միաժամանակյա կիրառման հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244-րդ, 246-րդ և 248-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 90757016 քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանին և Լոռու մարզային <<Հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲԸ-ին:

2. Փորձագետների լուծմանն առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Արսեն Մխիթարյանը որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ, երբ է այն առաջացել և ինչի հետևանքով: Այդ հիվանդությունը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու հնարավորությունից և նա կարողացել է ղեկավարել իր գործողությունները, թե ոչ: Տվյալ հոգեկան հիվանդությունն արտաքին դրսևորումներ ունի, թե ոչ և տվյալ հիվանդությունը զորակոչային հանձնաժողովը կարող էր ի հայտ բերել, թե ոչ:

բ/ Արսեն Մխիթարյանը ինքնասպանություն կատարելու պահին որևէ հոգեկան հիվանդությամբ կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարմամբ կամ այլ հիվանդագին վիճակով տառապել է, թե ոչ, որի հետևանքով դեպքի պահին ունակ չի եղել գիտակցել իր գործողությունների բնույթը և նշանակությունը:

գ/ Ինչ հոգեվիճակում է գտնվել Արսեն Մխիթարյանը ինքնասպանությանը նախորդող ժամանակահատվածում:

դ/ Արսեն Մխիթարյանի և Օֆելյա Վահանյանի վերը նկարագրված վիճաբանությունները՝ գործողություններն, առանձին-առանձին, ինչպես նաև միասին վերցրած, կարող էին Ա.Մխիթարյանին հասցնել այնպիսի հոգեվիճակի, որ վերջինս իրեն ամրակցված ինքնաձիգից իրեն հրազենային վնասվածք պատճառելով ինքնասպանություն կատարեր՝ պատճառահետևանքային կապ կա, թե ոչ:

ե/ Արսեն Մխիթարյանի փոխհարաբերությունները իր դասակի հրամանատար, լեյտենանտ Նարեկ Բաղդասարյանի և ջոկի հրամանատար Արամ Ղազարյանի հետ, որոնք Ա.Մխիթարյանի կողմից ընկալվել են լարված, կարող էին վերջինիս հասցնել այնպիսի հոգեվիճակի, որի պատճառով նա կարող էր ինքնասպանություն կատարել՝ պատճառահետևանքային կապ կա, թե ոչ:

զ/ Զինվորական ծառայության ընթացքում առկա դժվարությունները, Արսեն Մխիթարյանի բնավորության գծերը, վերջինիս կողմից իր ծառայողական պարտականությունները

դժկամությամբ կատարելը, համածառայակիցների հետ շփումներից խուսափելը, նրա կողմից ընկալված լարված փոխհարաբերությունները նշված համածառայակիցների հետ, Օֆելյա Վահանյանի հետ վիճաբանելու հանգամանքը և գործում առկա մյուս փաստական տվյալները՝ հանգամանքները, առանձին-առանձին, ինչպես նաև միասին վերցրած, կարող էին Ա.Մխիթարյանին հասցնել ինքնասպանություն կատարելու հոգեվիճակի՝ պատճառահետևանքային կապ կա, թե ոչ:

է/ Եթե վերը նշված հանգամանքների պատճառով չէ Արսեն Մխիթարյանը ինքնասպանություն կատարել, ապա գործի փաստական տվյալները հաշվի առնելով ինչը կարող էր նրա ինքնասպանություն պատճառ հանդիսանալ:

ը/ Վերը նշված հանգամանքներից, պատճառներից որևէ մեկը, մի քանիսը, կամ բոլորը միասին վերցրած, կարող էր Արսեն Մխիթարյանին հասցնել այնպիսի հոգեվիճակի, որի պատճառով վերջինս պահի տակ չի գիտակցել իր գործողությունները և պատահաբար է ինքնաձիգից կրակել իր վրա՝ հաշվի առնելով գործում առկա բոլոր փաստական տվյալները, այդ թվում՝ նշված փորձաքննությունների եզրակացությունները և դեպքի վայրի զննությամբ արձանագրված տվյալները:

3. Փորձագետներին խնդրել՝ պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն դատահոգեբանության և դատահոգեբուժության բնագավառի փորձագետների իրավասության մեջ, և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4. Փորձագետների պահանջով տրամադրել քրեական գործը կամ քրեական գործից նյութեր, ինչպես նաև փորձաքննության կատարման համար անհրաժեշտ այլ նյութեր:

5. Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ,

Ռ.Գ.Մկրտչյան